[280129]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» մեկտեմբերի 2017թ. N 176-Ա/1

«ԽՆԱՄՔ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի փետրվարի 16-ի N 30-Ա/1 հրամանի համաձայն ստեղծված հանձնաժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 19-ին տրամադրված՝ «Խնամք» հասարակական կազմակերպության կողմից 2017 թվականի դեկտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ բաժնով նախատեսված հայտին կից փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հավաստագրել «Խնամք» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի

սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության՝ տարեց և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում:

2. Հանձնաժողովին՝ ապահովել սույն հրամանը եռօրյա ժամկետում կազմակերպությանն առձեռն հանձնելը կամ փոստային կապի միջոցով կազմակերպության տրամադրած հասցեով ուղարկելը:

Լ. ԱՍԱՏՐՅԱՆ